ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հոկտեմբերի 2024թ. թիվ 768-Ա

ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ Ա.ՉՈԲԱՆՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 762-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Չոբանյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը, մինչև մրցույթի արդյունքում տնօրենի ընտրությունը, դնել «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի ընտանեկան բժիշկ Ասյա Մեսրոպի Չոբանյանի վրա:

2. «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Ա.Չոբանյանին տալ լրավճար «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հոկտեմբերի 1-ից:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ
2003720081

2024-10-01 18:25:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 1
ք.Վանաձոր